ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը
Կարո Ղուկասյան, նախարարի խորհրդական

2. Գործուղման վայրը և ժամկետները. Ք. Տաշքենդ (Ուզբեկստանի Հանրապետություն), 2023 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 20-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը. Համաշխարհային բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

- Մասնակցություն Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված PEMPAL IACOP ներքին աուդիտի համայնքի լիագումար նիստին
- Ծանոթանալ ներքին աուդիտի սիներգիայի և համակարգման վերաբերյալ տեղեկատվությանը՝ պետական հատվածի աուդիտի, հանրային ֆինանսների կառավարման փորձին:
- Ծանոթանալ տարբեր երկրների ներքին աուդիտի ոլորտում վերջին զարգացումների փորձին (PEMPAL-ի մասնակիցները և դրանից դուրս):
- Ծանոթանալ Ուզբեկստանի ներքին աուդիտի համակարգի բարեփոխումների փորձին:

5. Քննարկված թեմաները

- Ներքին աուդիտի բարեփոխումների սիներգիան պետական համակարգում, համաշխարհային փորձը
- Երկրների օրինակները՝ սիներգիա PIFC-ի, PAR-ի և PFM-ի բարեփոխումների միջև
- Փորձագիտական քննարկում բարեփոխումների համակարգի վերաբերյալ PIFC, PAR, և PFM (PEMPAL- տեսակետը)
- Ներքին աուդիտի հետ կապված աշխարհում տեղի ունեցող վերջին իրադարձությունները
- ՈՒզբեկստանի հանրային ներքին ֆինանսական վերահսկողության (PIFC) բարեփոխումները, առաջացած դժվարությունները և դրանց լուծումները
- SIGMA-ի ղեկավարության ուղեցույցը, համապատասխան ֆինանսների ստուգման վերաբերյալ. փոխկապակցվածություն PIFC-ի և PFM-ի բարեփոխումների միջև:
- Ռիսկերի կառավարման (RM) համակարգի ներդրում PEMPAL-ի անդամ երկրներում
- Ծանոթացում RM-ի դերին (Three Line) մոդելի միջոցով
- Ռիսկերի կառավարման վերջին զարգացումները PEMPAL տարածաշրջանում և դրանից դուրս
- Ռիսկերի կառավարման եղանկների ինտեգրումը ներքին հսկողության համակարգին

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակներում մի քանի տարբեր երկրների ֆինանսների նախարարության և մասնավոր ոլորտում աուդիտորական գործունեություն ծավալող անձանց հետ քննարկվել են ոլորտի բացերը և դրանց շտկման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումները, փորձի փոխանակման հնարավորությունները, որակավորման և կարողությունների զարգացման գործնթացների կազմակերպումը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.
Չեն եղել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- Յուրաքանչյուր պետություն ներքին աուդիտի ներդրման ժամանակ որպես կազմակերպական մոդել պետք է դիտարկի այն, ինչը համապատասխանում է տվյալ երկրի կառավարության կառավարման ձևին և տիպին:
- Ներքին աուդիտի վերաորակավորման և որակավորման պահանջների փոփոխության հարցը ժամանակակից աշխարհում որպես նոր մարտահրավեր դիտարկելու և ըստ դրա վերանայելու արդեն իսկ առկա մոտեցումներն ու սկզբունքները
- Հայաստանի ներքին աուդիտի ինստիտուտի զարգացման և արդիականացման նախադրյալների ստեղծումը

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

23 հոկտեմբերի, 2023թ. **Կ. Ղուկասյան**